

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2018Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 251500 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137200-ը քաղաքաբնակներ են (54.6%), 114300-ը՝ գյուղաբնակներ (45.4%):

2018թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1479 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 40-ով պակաս, մահացածների թիվը պակասել է 67-ով՝ կազմելով 1147: Բնական աճը կազմել է 332 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասել է 89-ով՝ կազմելով 544, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 4-ով՝ կազմելով 157:

2018թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 77.6 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 71.4 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն աճել են 8.7%-ով: Այսպես, 2018թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 48.4 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 8.1 մլրդ. դրամով կամ 19.9%-ով: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում խմիչքների (11.1%), սննդամթերքի (7.8%), դեղագործական ապրանքների (3.3%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (45.2%), հիմնային մետաղների (7.0%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է 20.3% աճ կամ արտադրվել է 13.5 մլրդ. դրամի արտադրանք: Իսկ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները նվազել են 6.2%-ով կամ արտադրվել է 27.4 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 77.8 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 71.1 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 9.4%:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 47.6 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 30.2 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 11.1 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 19.1 մլրդ. դրամի արտադրանք: 2018թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 73.6 %-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2018թ. առաջին կիսամյակում կազմել է 27.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.5 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 53.9 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 49.3 մլրդ. դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 4.3 հազ. տոննա միս, ինչը 16.2%-ով ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 0.2 %-ով կամ արտադրվել է 40.4 հազ. տոննա կաթ, ձվի արտադրության ծավալը կազմել է 71.4 մլն. հատ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ պակաս է 6.7%-ով: